

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի կամքագրատան մէջ:

(Ստորագրողացիք գիտում են ուղղակի
Դիմում. Pedagogia „Muzak“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նաղի կիրակի և տոն օրերէն):

Նայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով:

Նայտարարութիւնները համար վճարում են
խորանշինը բառին 2 կոպէկ:

ՅԱՆՈՒՄԱՐՈՒԹԻՒՆ

Մի հարկ ժողովուրդը մտորեցնելու:—Եւրոպին
տեսնելով ինչ: Նամակ Գանձակից: Ներքին լու-
րերը:—Արտաքին տեսնելով ինչ: Աւստրո-Ուն-
գարիա: Աֆգանիստան: Պրանիա:—Իսպանիայի
և Եր:—Վաշկին հեռագրից:—Նայտարարութիւն-
ներ:—Տեղեկացուց:—Բանասիրական: Նախա-
կրթանք:

ՄԻ ՀՆԱՐ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՍՈՒՈՐԵՑՆԵԼՈՒ

III

Ում յայտնի է որ յիսուննե-
րորդ թուականներում Թիւրքիայի
և Պարսկաստանի սահմաններում,
Ջիլվանիէի ասիած երկրի մէջ
բնակիչը բազմութիւն և քաջ լեռ-
նաբնակ նեստորեանները խնդիրը
ներկայացրին ամենայն հայոց կա-
թողիկոսին որ լուսաւորչական ե-
կեղեցին ընդունի նրանց իր գիր-
կը: Երկար գրադրութիւններից
յետոյ ի՞նչ հետեանք ունեցաւ
այդ իրողութիւնը,— ոչինչ:

Դա չնականութիւն է:—Երբ
երեւոյթը բացատրւում է ոչ թէ
միայն անհոգութեամբ մեր հոգե-
ւորականութեան և ազգի կողմից,
բայց և այն մեր ազգային մոլե-
ռանդ յատկութեամբ, որ մենք
սրբապղծութիւն ենք համարում

ընդունել մեր մէջ որ և է օտար
տարրեր, փոխանակ աշող դէպ-
քերից օգուտ քաղելու ազգային
տարրերը զօրացնելու: Դա չնա-
կանութիւն է:

Երբ մեզ յիշեցնում է այն թէ
փոքրիկ, բայց նշանաւոր երեւոյթը
որ պատահեց վաթսուններորդ
թուականներում Մօսկվայի հայ
ուսանողութեան մէջ: Մի լեհացի
ուսանող, որ Լազարեան ձեռնա-
րանի աշակերտ եղած լինելով հա-
յերէն գիտէր, ցանկութիւն էր
յայտնել հայ սիրողների ներկա-
յացմանը մասնակցելու: Եւ ահա
Մօսկվայի խելքը հայ ուսանողու-
թիւնը երկու շաբաթ շարունակ
վիճաբանում էր այն հարցի վրա
թէ կարելի է արդեօք ընդունել
մի օտարազգուն հայ սիրողների
բեմի վրա և արդեօք հայոց բեմի
համար դա սրբապղծութիւն չի
լինի:— Դա միթէ չնականու-
թիւն է:

Բանի մի տարի սրանից ա-
ռաջ Պարսկաստանի ասորիները
կամեցան ընդունել լուսաւորչակա-
նութիւնը:— Պարսկաստանի հայոց
հոգեւորականութիւնը ամեն մի-
ջոցներ գործ դրեց որ ասորիների
դէպի լուսաւորչական դաւանու-

թիւն անցնելը չաջողվի:— Դա չի-
նականութիւն է:

Հատ ժամանակ է Վանի բո-
ղոքական միսիոնարները, սկսեցին
համոզել Վանի հայոց ազգային
ժողովի ներկայացուցիչներին որ
ընդունեն իրանց ժողովը և բողո-
քական հայերին, որպէս ազգի մի
մասի ներկայացուցիչներին: Հե-
տեանք ի՞նչ եղաւ,— նկատողու-
թեան անգամ չառնվեցաւ: Դա չի-
նականութիւն է:

Օգնութեան վերջին ապստամ-
բութեան անաշտողութեան գլխաւոր
պատճառներից մին հայ-լուսաւոր-
չականների և հայ-կաթողիկոսների
միմեանց մէջ անհամաձայնութիւնը
և միմեանց դէմ դաւաճանու-
թիւնն էր: Երբ Բ. Դրան կօ-
միսէրները նորերում հասան
Դիարբէքի, ամենամեծ անբա-
ւականութիւններ և երկպառա-
կութիւններ ծագեցան այդ նա-
հանգի հայ-լուսաւորչական և հայ-
կաթողիկոս ազգաբնակչութեան մէջ
գլխաւորապէս այն պատճառով որ
կօմիսէրների թուում մի կաթողիկոս
հայ կար, որին թշնամաբար էին
վերաբերւում հայ լուսաւորչական-
ները: Դա չնականութիւն է:

Հատ ժամանակ է Դիարբէ-

քիւրի բոլոր քրիստոնեաները՝ լու-
սաւորչական, բողոքական և կա-
թողիկոս հայերը, յունադաւան և
կաթողիկոս յոյները, բողոքական և
նեստորեան ասորիները բազմութիւ-
նաւորապէս թիւններով դիմեցին Ա.
Պօլսի հայոց պատրիարքին, խնդ-
րելով նրան պաշտպանել նրանց
իրաւունքները Բ. Դրան առջև:
Ուրեմն այդ բոլոր քրիստոնեաները
ճանաչում էին հայոց պատրիար-
քին իրանց բաղաբական դուխ-
նայի ինչ արաւ պատրիարքարա-
նը,— նա այդ հանգամանքից օգուտ
չը բաղեց և ոչինչ չարաւ:

Վերջին ժամանակ, երբ հակա-
հաստեան հայ-կաթողիկոսների ներ-
կայացուցիցը դաւաճանեց իր հօ-
տին և կրկին անցաւ Հոռոմի պա-
պի անմիջական իշխանութեան
տակ, հակահաստեանները ուղե-
ցին, թէ և կաթողիկոս մնալով յանձ-
նել իրանց բաղաբական գործերի
վարելը Ա. Պօլսի հայոց պատ-
րիարքարանին և հայոց ազգային
ժողովին: Բայց լուսաւորչական
հայերը հասկանալով որ հայոց
ազգի կաթողիկոս մասը աւելի լու-
սաւորված, մտաւորապէս աւելի
զարգացած, աւելի առաջադէմ
մաս է, մերժեցին նրանց այդ խնդ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱԿՐՈՍՆԵՐ

ՀԱՅՐԵՆ ԳՐԱՐԱՌ ԼԵՂՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

Ի Գաբրիէլ արքեպիսկոպոսէ Ավագիան

Մասն Ա. Հինգերորդ տպագրութիւն

Հրատարակող Ջան Գառնիկ: Թիֆլիս—1878

Հրատարակութիւն Կենտրոնական գրախոսա-

նախ, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

Թիֆլիս, Գառնիկ Գառնիկ Գառնիկ Գառնիկ

դիրքը, վախճանարով որ մոտենալով ազգային ժողովը կաթօլիկները կը նսեմանցնեն իրանց ներկայութեամբ հայ-լուսաւորչական մասի աւելի տգէտ, աւելի յետադէմ անդամներին հեղինակութիւնը և ազգային գործերի ղեկը կրնին միտաւորապէս աւելի զարգացածներին ձեռքը... Այդ ինքնակամութիւն չէ...

Այդ բոլոր անմիջական երեւոյթներին հետեանքը ինչ կը լինի: Հայը չուզենալով դուրս գալ իր նեղ ինքնական, աւանդական շրջանից, չուզենալով և չը կարողանալով ազգել կոչուող քաղաքական ճանապարհով իրան շրջապատող կիսավայրենի ցեղերի վրա, ուրիշ կողմից իրանից վիժելով ազգի մի ամբողջ երրորդականը, իր այլադասան ցեղակիցներին, միշտ թող մնալով կանհետանայ:

Եւ այդ տեսակ ազգութիւն պահանջում է իր ինքնավարութիւնը թիւրքիայում...

Այժմ, ինչպէս տեղեկացրեց մեզ հեռագիրը, Մեծիկան կառավարութիւնը հրամայեց իր ազէնտներին ժողովրդագրութիւն անել Փոքր-Ասիայում և Հայաստանում: Եւ հայերը իրանց ինքնական ընտանիքները համեմատ միշտ երկպառակութիւն և թըշնամութիւն անելով իրանց այլադասան եղբայրների հետ, ի հարկէ կաշխատեն ապացուցանել Մեծիկան ազէնտներին որ կաթօլիկ և բողոքական հայերը՝ հայեր չեն: Այսպիսով կամաւոր կերպով փորձանքներով իրանց ազգութեան թիւը, ի հարկէ յոյս չեն կարող

ունենալ որ Մեծիկան պաշտպան կը հանդիսանայ այդքան փոքրած թիւ ազգութեան քաղաքական իրաւունքներին...

Մեծիկան պաշտպանութիւնը նոյնպէս մի յատկութիւն է ինքնական քաղաքակրթութեան: Յայտնի է որ անձնասպանութիւնը համարվում է ինքնացիների մէջ կրօնական զգացմունքի և բարոյականութեան ամենաբարձր արտայայտութիւն:

Վերադառնալ հայոց ազգի գոյութեան վերջին երկու հարիւր տարին և մենք կը համոզվենք որ հայութիւնը այդ ամբողջ ժամանակամիջոցում իր բոլոր հասարակական գործիքներով գիտակցաբար ազգային և քաղաքական անձնասպանութիւն էր գործում: Դա էլ ինքնակամութիւն է:

Լա է ես ինձ սպանեմ, առում էր հայութիւնը, քան թէ դուրս գամ իմ նեղ ազգային, ինքնական, աւանդական, հնացած, հոտած, փտած դրութիւնից:

Վերջացնում ենք զիմեով թիւրքիայի հայերին: Եթէ դուք կը շարունակէք այդ ինքնական ընթացքը, ձեր ազգային մարմինը կը քայքայվի, դուք ձեր ձեռքերով ձեզ կը մեռցնէք: Եթէ կը շարունակէք այդ տեսակ անձնասպանութիւն գործել իրաւունք չէք ունենայ Արօպայից ինքնավարութիւն պահանջել թիւրքիայում:

Եւ զիտեք ինչ կարող է պատահել մինչև որ դուք կը բողոքէք Արօպային թէ ձեր դրութիւնը թիւրքիայում անտանելի

է, — ձեզանից հալածված, ազգութեան միջից ձեր մոլեւանդութեամբ վիժված բողոքական և կաթօլիկ եղբայրները, կատաղած ձեր դէմ կարող են իրանց կողմից յայտնել Արօպային թէ ընդհակառակն շատ գոհ են թիւրքաց կառավարութենից:

Այն ժամանակ դուք ձեր ինքնակամութեան համար պատիժ կը ստանաք, կը պատժվէք այն բանի համար որ ձեր այլադասան եղբայրներին հայոց ազգութեան անդամ չէք համարում, կը պատժվէք ձեր դարեւոր ինքնական ընթացքի համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԿԱ ԳԱՆՁԱԿԻՑ

7 սեպտեմբեր

Պատերազմը վերջացաւ, մենք էլ կարծեցինք թէ ամեն նեղութիւններն էլ նրա հետ վերջացան, բայց սխալվեցինք. մեզ համար նոր և աւելի սաստիկ պատերազմ է բացվում, ասում եմ պատերազմ, ոչ թէ երկիրներ յաղթելու, ոչ թէ երկիրներ տրոհելու, այլ պատերազմ պարտաւոր, պատերազմ հայի և պատերազմ կեանքի...

Այս տարվայ մերերը, դաշտի միջերը խեցին խեղճ մշակ երկրագործ գիւղացիների ձեռքից օրական ապրուստը — հացը: Երկար տարիների երաշտութիւնը մէկ կողմից, անցեալ տարիների պատերազմը միւս կողմից միջոց չի տուին հացի պաշարի պատրաստութեան համար հոգ տանել — այսպիսի մի անակնկալ ու օրվայ ապրուստը հայթայթելու... Այս օրվայ օրը գիւղացին — մշակ երկրագործը — երկու մեծ հոգսի մէջ է խնդրում, առաջինը, որ հաց չունի ապրելու... երկրորդը որ ցորեն չունի ցանելու... այս վերջին դէպքը աւելի է տանջում և մաշում նրանց սիրտը և հոգին, որովհետեւ դա պարզ նշան է, որ միւս տարին էլ պիտի զգայ նոյն կարօտութիւնը, թէ և մի քանի աստիճան պակաս: Գիւղացի երկրագործը ինչպէս չը զգայ այդ նեղութիւնները, երբ սերմի ցորենի թաղարը — 40 պոլսը, հասնում է 80 — 100...

Թիւրք — զի ես առաւ ասեմ. մութ և վատ դրութեամբ: Այս պէս և զիցիւն յետինք առաջինք, և առաջինք յետինք (տգեղ. գոյնեալ դրութեամբ լինելը. այսպէս յետինքն առաջինք և զիցիւն, և առաջինքն յետինքն) (83) Եւ ահա այլմիջ, ան ուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մարտապետ և ինքն մեծաւոր, ինքն իր տեսանել (փոխանակ. և հաւայր մի Զաքէոս ան ուն, որ մաքսաւ պէտ և մեծ տոտուն ոք էր, ինքն իր տեսանել)... ոչ կարելի ըրալ մութ ինքն էն (առաջական ոճ, փոխանակ, վասն ըրալ մութ և ան ժողովրդաց) և ընթացեալ յառաջըս (յառաջ) էլ ի ժամատակնիս (ի ժամանակ տակնիս) անցանելոց էր, պակասում է (Յիսուս) (Փոխանակ, իբրեւ եկն Յիսուս ի տեղին յայն հայեցալ ի վեր): Առաւ մեղաւոր ի մութ և մութ լուծանել, (վաղ գործածված ոճ) Եւ ասէց նա Յիսուս, Կեցուցանել զկոտորէ (89) Մի երկն չիւր, հօտ փոքր ի կի, զի հանցեալ հայր ձեռք զգալապետութիւն, վաճառեց էք... դուք, բարաբար էք (փոխանակ, հայր ձեռք, տալ էք, վաճառեալ, տուր, արա) Արարէք ձեզ քաղաք առանց համարոյ, դանձան պաղատ յերկինս (անհասկանալի շարադրութիւն. զի ուր դանձք ձեր է (են) և դուք նմանող մարդկան, (փոխանակ, և դուք նմանող և զի ըրէք ծառայից) և թէ յերկրորդ... պաղատեալ և կեցուցեց (զայց է և զտանից) Եւ յորում ժամու ոչ կարծեցէք զայս որդի մարդոյ (եկեցեց): (95)

Այդ երկու ելիւն ի տաճարն (զնացիւն). զի ոչ եմ իբրեւ զայլ ի մարդկանէ, զայս փշտալի ողոս և զանիրաւ և զունս, (անորոշ դրութեամբ) Եւ (զնաց) սա արարապետ... (պակասում է, առաւ և եկ, քան զնա: (100) Յայն ժամ (երբ) նմանեցի արարապետի... և ի մէջ զի չեւրի (անորոշ, կէս զի չեւրի թէ զի եւրվայ մէջ) Եւ ի վաճառականս (առ վաճառականս) Գետոյ դան և այլ կուսանցն (եկին միւս կուսանցն) և այլն:

Այս սխալներէց մի մասը բուն լեզուի դէմ մեղադրուած է, որ ոչ մի շարադրութեան մէջ չէ կարելի գործածել, մասնաւոր այսպիսի դասադրելի մէջ, որ նշանակված է զբարձու լեզուն ուսանել և կ'ստանա իր նամար. մի մասն էլ — ինչպէս են մի քանի խոյր, երկրորդական նշանակութեամբ գործածված, և անգործածական բառեր, մութ ոճեր, անկանոն, և միմեանց տեղ գործածված ժամանակներով բայեր — թէպէտ սխալ չէ և թերեւ օրինաւոր, սակայն սկզբնական դասադրելի նոյնպէս մերթելի, ինչպէս բուն սխալները: — Սպաս, ինչպէս տեսան ընթերցողը, բնագիրներէ միայն յերկրականական վերաբերութեան մէջ պատահած թերութիւններն են, բայց սրբալի բառեր կան աւելորդ (անպատասխան) գործածված և կրկնված, և ընդհակառակն, սրբալի կարեւոր գիտնալու բառեր կան, որ զանց արուած են այնտեղ (Բնագիրները դեռ որչափ ուրիշ անյարմարութիւններ ունեն. վարդապետական անմարտելի ոճին, այլաբանութեանց, շարվապանի վատ կիրառութեան պատճառով:

(Կը շարունակվի)

զի չը ջին՝ իբրեւ զծառս. հանելուկ, փոխանակ արեւել, զմարդիկս որ չը ջին՝ տեսաւ նեւ իբրեւ զծառս: Եւ բաց եւ տեսանէր, որդիացաւ եւ տեսանէր (տգեղ. և պակասում ասացում): — (Եր. 38). Այր ոմն էր մեծատուն (Եր. 41) ամբարտաւ, հանգչիլ, թանալ, անկանոն բաշերն վաղ են գործածուած. ի հեռատանէ (ի հեռուստ). և նա աղաղակեաց (նա աւելորդ է): (45) Ընդունել անկանոն բայ. և ոչ այստեղ որ ամ մեզ անցանել (պակասում է, կ'աւելի): Եւ ասէ, (պակասում է, մեծատունն), արծալեկ երկրորդական նշանակութեամբ է գործածված. բայց եթէ ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա և ապաշխարեցնեն (տգեղ ասացում. և աւելորդ է). և ոչ թէ ի մեռելոց ոք յառնիցէ հաւատասցեն. հանելուկ. փոխանակ ասելու. ապա և ոչ հաւատասցեն, թէ յառնէ ոք ի մեռելոց: (50). Այլ առաւ արեւ առ նոսա (առաջին ոգ ?)... նմանեցաւ արարապետին երկնից առն, որ սերմանիցէ (սերմանեաց) ինչպէս նոյն տեսակ առուած է յետոյ. որ կ'ամեցաւ համար առուած, որ ել ընդ առաւոտս: Այդ ուստի ունիցի դորմն (նմ) փոխանակ, արդ ուստի իցէ որմնն. երթիցեք, քաղեցեք (քաղիցեք) քաղեցէք գորմնը, և կ'ապեցէ զայն (փոխանակ, գորմնն և զայն կամ, գորմնը և զայն): (55). Մատեան որդ զերկրաման պահանջին առ Պետրոս (մատեան առ Պետրոս ոք)... և ասեն (հարցին)... և ասէ. այն, (փոխանակ. պատասխանի ետ նոցա Պետրոս, թէ «այո, տացէ»), և իբրեւ մեռու ի տունն, յառա-

շարք, որ հաշտարար դատաւորի մօտ թարգմանիչ է և որի հոնքը ոչ տարվայ երաշտութիւնից, ոչ մորեկից, ոչ մկնիկից և ոչ էլ պատերազմից ոչինչ կտրուի չունի... մնացեալները ընտանիքի մարդերն են և փոքրիկ որդիքը... Բարեկամաւ աւելացրեց և այն, թէ այսպիսի բաներ քիչ չեն պատահել և հասարակ ժողովրդական դասի մէջ— բայց առաջիններից յետոյ վերջինները կորցնում են իրանց նշանակութիւնը... այժմ հաւատում էք, որ հարկաւոր է և ասել—«չէր բարեք ուր և չիցեն կարելի»։ Բարեկամաւ տէրութիւնը երբ դուրս էր բերի իր գիտաւատ ցանկութիւնը, և ինչ հետեանք կառավարող դրանից, այդքանը մեր դատաւորութիւնից վեր է գուշակել, միայն կատարել, որ օրից որ աւաղակութիւնը և մարդասպանութիւնը աւելանում են, և նայելով ներկայ նշաններին, դուք մինչև նոր հոնքը աւելի սարսափելի դէպքերի հանդիպեցէք։

Ֆ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Կ. Պօլի «Արարտեան» ընկերութեան Գ. Տեղեկագիրը (1878-1879 թիւ)։ Առաջարկի մէջ պատմութիւն է թէ ինչպէս է կազմակերպվել ընկերութիւնը և նկարագրվում է նրա այժման դրութիւնը։ Բնութիւնը պարզապէս է ընկերութեան դրամական հաշիւը, կանոնադրութիւնը, անդամների և նուիրատուների ցուցակը։ Խորհուրդը կը տալիս ընկերութեան փոքր ինչ ուշադրութիւն դարձնել աշխարհագրութեան վրա, ընկերութեան կարծիքով Գերբէնդ քաղաքը գտնվում է Պարսկաստանում, այն ինչ յայտնի է որ նա գտնվում է Անդրկովկասում ուստի պետութեան սահմաններում։ Հաշիւը երևում է, որ 1877 թիւի ապրիլ ամսին ընկերութեան հասոյթը 70 օսմ. ոսկի էր, 1878 թիւի ապրիլ ամսին ընկերութեան հասոյթը արդէն 120 ոսկի էր, իսկ ներկայ 1879 թիւի ապրիլ ամսին հասու 2085 ոսկու։

Ստացանք «Փորձ» ամսագրի սեպտեմբերի տետրակը։ Առանձին ուշադրութիւն է դարձնում իր վրա, ինչպէս և նախընթաց երկու համարներում, Վահան վ. Բապտիստանցի յօդուածը «Կատարաստա-նագիրը Միւլիթար Գօշի»։

«Ваканск. Извѣстн.» լրագիրը լսել է, որ պ. Թալիբովի և Զարաբի ծծմբաթթուի գործարանը արդէն պատրաստ է և այս սեպտեմբերի ամսից պէտք է սկսի բանել։

Ռուսաստանում հրէաները վարույ է որ փորձում էին ունենալ իրանց սեփական լրագիր ուստի սերէն լեզուով, որի պաշտօնը պէտք է լինէր պաշտպանել հրէաների իրաւունքները։ Այդ ուղղութեամբ հրատարակվում էին «РАСВѢТЪ», յետոյ «СІОНЪ» և վերջապէս «ДЕНЬ» լրագիրները։ Բայց նրանք երկար տևողութիւն չունեցան։ Այժմ սկսեց հրատարակվել Ս. Պետրերուրդում «Русскій Еврей» ամսուով շաբաթաթիւթը։ Առաջին համարից երևում է որ այդ լրագիրը մի կողմից իրան նպատակ պէտք է դնի ուսումնասիրել Ռուսաստանի հրէաների դրութիւնը, իսկ ուրիշ կողմից պէտք է տեղեկութիւններ տալ ամբողջ աշխարհի հրէաների դրութեան մասին։ Բայց սորանից շաբաթաթիւթը պարունակում է իր մէջ ուսումնական և բանասիրական բաժիններ։ Տպագրութեան կողմից նոր թերթը շատ մաքուր է։

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ նորերումս թիւի ԼՈՒՐԵՐ փողոցի վրա պատահած մի երիտասարդի սպանութեան գործի առիթով պ. պ. Ալազրեզով և Խուզաղով ոչ կաշնաւորված են եղել, ոչ էլ եղեռնագործութեան մասնակցող են համարվում, ինչպէս առաջ օխալմամբ հաղորդել էր լրագիրը, այլ կանչվելու են դատարան միմիայն որպէս վկաներ։

Վաղը, ուրբաթ օր, սեպտեմբերի 14-ին հայոց Թատրոնական մշտական խումբը տալու է իր երրորդ ներկայացումն Ամարային թատրոնում։ Խաղալու են «Արշակ II-որդ» պատմական ողբերգութիւնը։

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ երեւի ուսու վկայաւոր պ. Տուրգենևի գալու է այս աշնանը Ս. Պետրերուրդ և մնալու է այդտեղ ամբողջ ձմեռը։ Տուրգենևի միշտ արտասահմանում է կենում։ Ասում են նա դիտաւորութիւն ունի կրկին ուսումնասիրել ուսուց հասարակութեան այժման դրութիւնը։ Ուշադրութեան արժանի է, որ Տուրգենևի վաճառքը որ ուսուց հասարակական կեանքի մէջ մի որ և է փոփոխութիւն է նշմարվում, արձագանք է դառնում ուսու հասարակութեան տրամադրութեան և ընծայում է իր հայրենիքին մի որ և է նոր բովանդակութիւն։

ԱՅՈՒՆԱՆԱԿՈՒՄԻՅԵ մեզ գրում են. «Մեր գաւառի Բարսէպ գիւղի բնակիչ թուրք երիտասարդներից մէկը, սիրահարվելով մի աղջիկ քրեւդ կնոջ վրա (Արհաւանի սահմանից), բերում է կնոջը իր տուն։ Այս բանը իմանալով կնոջ հայրենակից քրեւդերը, մօտ 40 մարդ, նոր ձկն հրացաններով զինաւորված, գալիս են Բարսէպ գիւղը, ցերեկ ժամանակ չըջապատում են երիտասարդի տունը և սկսում են հրացաններ արձակել։ Նոքա մի քանիսն սպանում են և մի քանիսն վիրաւորում։ Եթէ դեղագիր չը միջամտէին, գործը շատ վատ հետեանքներ կունենար։ Քրեւդերը անցան թիւրքաց Հայաստան»։

Սեպտեմբերի 10-ին թիւի ԼՈՒՐԵՐ Խորհուրդ անվանված թաղում մի մարդ սպանում է մի կապիստան Ժողովը ունեցող կնոջ։

Թիւի ԼՈՒՐԵՐ Խորհուրդ անվանված փողոցում վեց անդամներից բաղկացած մի ընտանիքի մայր, աղքատութիւնից ստիպված ծախում է իր 12 տարեկան աղջկան մի 45 տարեկան օտարականի վրա։ Այս վերջինը աղջկան իր մօտ չորս ամիս պահելուց յետոյ իր կողմից էլ մի ուրիշ վրա է ծախում։

Սեպտեմբերի 28-ին, Կուր գետի մէջ լողանալու ժամանակ խեղդվել է մի չուպուրցի երեխայ, որին հայրը թիւի ԼՈՒՐԵՐ էր բերել Ներսիսեան ուսումնարանը տալու համար։

Թիւի ԼՈՒՐԵՐ աղքատ բնակիչներից շատերը դիմում են գրքացին, երբ ընտանիքի անդամներից մէկը հիւանդանում է։ Հիւանդները մեծ մասամբ մեռնում են և քիչերը միայն պատահմամբ աղատվում։ Այդ հանգամանքը աղքատ մարդիկներին էլ յայտնի է, բայց այնուամենայնիւ նոքա չարուստաւորում են այդպէս անել, ասելով որ բժիշկները իրանց այցելութիւնների համար թանգ գին են պահանջում։

Մեզ հաղորդում են, որ այս տարի չափազանց շատ ցանկացողներ են եղել մանկ թիւի ԼՈՒՐԵՐ Ներսիսեան դպրոցը։ Նրանցից շատերին տեղի պակասութեան պատճառով չեն ընդունել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅՈՒՆԱՆԱԿՈՒՄԻՅԵ

Աւստրիական պաշտօնական լրագիրները ողորդութեամբ խոսում են այն իրողութեան մասին, որ աւստրիական զօրքերը, զբաւեւում են Նոյթ-Բաղարի սանջակը, իրանց ընթացքի ժամանակ ոչ մի արդիւնք չը պատահեցան թէ տեղական մահմեդական աղբարեւորութեան թէ թիւթից կանոնաւոր զօրքերի կողմից։ Բայկանեան թերակողու վրա մի երկրի զբաւելը այս անգամ աւստրիացիներին էր ժանի նստեց։ Այսպիսով աւստրո-ունգարական կառավարութիւնը խաղաղ ճանապարհով հաւաքում է ուսու-թիւթից վերջին պատերազմի պտուղները, թէպէտ Աւստրո-ունգարիայի աղբարեւորութեան մի մասը առանձին համարվում է վերաբերվում դէպի քաղաքական այդ քայլը։ Աւստրո-ունգարական աղբարեւորութեան մի մասը, որոնց թիւթում կան նոյնպէս նշանաւոր պետական մարդիկ և յայտնի կուսակցութեան առաջնորդներ, գտնուում

է, որ աւստրիական զօրքերի ընթացքի շարունակութիւնը դէպի Բալկանեան թերակողու գին մի կողմից Աւստրո-ունգարիային շատ թանգ կը նստի և միւս կողմից առիթ կը տայ, որ աւստրիական և թիւթից կառավարութիւնների մէջ քաղաքական անհամաձայնութիւններ ծագեն։ Մինչև անգամ սլավոնները, որոնք իրանց համար օգտաւէտ էին համարում Նոյթ-Բաղարի միացնելը Աւստրիայի հետ, որովհետեւ այդ դէպքում սլավոնական տարրը հզօրանում էր, մինչև անգամ այդ սլավոնները, ի նկատի ունենալով մի կողմից Ռուսաստանի և Գերմանիայի, միւս կողմից Գերմանիայի և Աւստրո-ունգարիայի յարաբերութիւնները, անհամաձայնութեամբ են նստում գործին և այսպիսի մի հարց են առաջարկում, թէ արդեօք աւստրիական կառավարութիւնը ինչ նպատակ ունի, որ զբաւում է Նոյթ-Բաղարի սանջակը։ Մի քանի լրագիրներ յայտնում են նոյնպէս այն կարծիքը, որ նոյն իսկ աւստրիական կառավարութիւնը, ի նկատի ունենալով մի քանի արտաքին և ներքին զբաւութիւններ, որոնք իր արած կարգաւորութեան հետեանք կարող են լինել, հաւատացած է, որ իր գործը դեռ չէ վերջացել և որ ապագայում բաւական աշխատանք կունենայ։

Ներսիսեան գրեթէ բոլոր լրագիրները յայտնում են, որ Գերմանիայի և Աւստրիայի շահերը այդ հարցի վերաբերութեամբ համաբաշխ են։ Գրաւելով Նոյթ-Բաղարի սանջակը գիտաւորութիւն կայ կանգնել Սերբիայի և Չերնօգորայի մէջ գտնված երկրում, արգելի սերբ տարրի հզօրանալուն և մի և նոյն ժամանակ նուազեցնել Ռուսաստանի աղբեցութիւնը սլավոնների վրա։ Այդ նպատակին հասնելով Աւստրիան բաւականութիւն է տալիս թէ իր սեփական, թէ Գերմանիայի և Անգլիայի պետական շահերին։

Բայց ինչքան էլ բարձր լինէին աւստրո-ունգարական կառավարութեան նպատակները, նոյա հասնելու համար այդ պետութիւնը բաւական շատ դժուարութիւնների և մինչև անգամ փոխանքների կը պատահի։

ԱՅՈՒՆԱՆԱԿՈՒՄԻՅԵ

«Մշակի» անցեալ համարներից մէկի մէջ մենք յայտնել էինք, որ անգլիական դեսպան Նոյթեան բոլոր անդամները, որոնք գնացել էին Աֆգանիստանի մայրաքաղաքը, Կաբուլ, սպանիւցան աֆգանական ապստամբված զօրքերից և ամբողջից։ Այդ անցքի մասին անգլիական լրագիրները հրատարակել են շնորհաւորութիւնը մօտաւորապէս հետեւեալն է։ Մի աֆգանիստանցի, որ միշտ մեր դեսպանի մօտ է գտնվել, չափազանց գովում է բրիտանական օֆիցերների քաջութիւնը և պատարաստութիւնը։ Նա հաւատացնում է, որ ապստամբված զօրքերը 12 զունդ էին կազմում, որոնք առաջ ուղևորվել են դէպի գեսպանատան դռները, բայց այդտեղ սարսափելի հրացանաձուլութեան եղբարկվելով, յետ են դարձել և գեսպանատունը կրակ են գցել։ Եթէ անգլիական գեսպանութեան պաշարված անդամները մնային գեսպանատանը, պէտք է բոլորն էլ այրվէին, նոքա սերբ ձեռքին դուրս են վազել և բոլորն էլ սպանվել են աֆգանիստանցիներից։ Կաբուլցիներից 410 մարդ են սպանված։ Մի քանի անգլիացի ձիաւորներ, որոնք քաղաքից դուրս էին եղել, չեն եղբարկվել իրանց ընկերների վրէժակին, նոքա անհետացել են։ Վախեցած էմիրը իր մի քանի հաւատարմներով փախել էր ամրոցի մէջ։ Նրեկ նա ինքը անձամբ ներողութիւն կը խնդրէ կառավարութեանից, որ չը կարողացաւ զսպել իր զօրքերին։

ՖԻՆԱՆՍԱՆ

Ֆրանսիական կառավարութիւնը այժմ տատակ զբաղված է իր զօրքերի վերակազմութեամբ։ Մինչդեռ Օմալի դուքսը, որ զօրքերի գլխաւոր տեսուչ է, զբաղված է Ֆրանսիայի հարաւային մասում գտնված զօրքերի քննութեամբ, զննութեան միջոցով գնահատել Գրեյէ ուղևորվել է Ֆրանսիայի հիւսիսային և արեւելեան սահմանների վրա գտնված ամրոցների պիժը նայելու և նրանց պիտանիութիւնը վերատուգելու համար։

Ֆրանսիական միջնորդներ ուղևորվում են Ֆրանսիական ամենալաւ և յայտնի զննութեան ինժեներներ։

Ֆրանսիայի զննութեան ոյժերը այժմ այն դրութեան մէջ են, որ ցանկացած բուլգար կառավարութիւնը կարող է ունենալ 750 հազար պատրաստի զօրք, որի թիւը հետզհետէ կարող է աւելանալ։ Մի տարուց յետոյ, երբ կը վերջանայ Ֆրանսիական զննութեան վերակազմութիւնը, կառավարութիւնը ամեն բուլգ կարող է ունենալ 900 հազարից աւելի պատրաստի զօրք։

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը զբաղված է պատգամաւոր Լեզանի առաջարկութեան քննութեամբ։ Մոզիլը արդէն մի մասնաժողովի է յանձնված։ Լեզան առաջարկել է զննութեան 5 տարվայ ծառայութեան ժամանակամիջոց դարձնել երեք տարվայ։ Պատգամաւորների ժողովի ձախ կողմը համարվում է այդ նախագիծը, բայց զննութեան միջնորդը առաջարկել է օրէնքի այդ նախագիծը ընդունելուց առաջ մի փորձ անել։ Այդ պատճառով մասնաժողովը աշխատանքները շատ դանդաղ են ընթանում։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Մարիո» լրագիրը իմանում ենք որ տպագրատանների ընդհանուր տեսուչ Թիւրքիայում, Գարու-թիւն Էֆենդի Սարափեանին աղբից ստանալ Բ. Դուրից առանձնաշորհուրթիւն Վանի ծովի վրա չորհեաւ բանացնելու համար։ Պատուելի Էֆենդին մօտ երկու տարի աշխատելիս է եղել այդ մասին և այժմ իր գործի աղբիցութիւնը ապահովեցնելու համար մի զուտ հայկական ընկերութիւն է կազմել, որի ձեռքից էլ չեն կարող խլել օտարազգիները նաւադնացութեան արդիւնաւորութիւնը, ինչպէս այդ ուղեցել են անել մի քանի եւրոպացիներ և յետի թէ այս տեսակ ընկերութիւնների թիւը Հայաստանում չը սահմանափակվէր միայն վանի լճի եզերքներով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԻ, 11 սեպտեմբերի։ Ս. Պետրերուրդի թիւթից գեսպանութիւնը «ԴՈՒՍԵՆ» լրագրի մէջ հրատարակել է այն հեռագիրը, որի մէջ ասված է, թէ Կոստանտին Կիրիակօպուլը, որ փորձեց սուլթանին սպանելու, ստացած վերքերից վնասվեցեալ։

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԻ, 11 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 94 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ. 82 կ., երրորդ 93 ռ. 62 կ., չորրորդ 93 ռ. 37 կ., ներքին 5% տոմսի փոխառութեան տոմսը արժէ 232 ռ., երկրորդ 235 ռ. 5 կ., արեւելեան տոմսի փոխառութեան տոմսը արժէ 91 ռ. 50 կ., ոսկի 7 ռ. 86 կ.։ Ռուսաց 1 ռուբլ 1օնգոնի վրա արժէ 25.06 պէնս. ուստաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 214 մարկ. Փարիզի վրա 263 ֆր. 50 սանտիմ։ Տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակիչ ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆՈՒՆԻ

